ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

22 նոյեմբերի երեքշաբթի 2022
տպագրության ԺԱ տարի

167
(2647)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 139

2022 թվականի հունիսի 9-ի նիստի ժամանակ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարել է, որ ահռելի քանակությամբ պետական գույք կա, որը ոչ մի եկամուտ, արդյունք չի բերում երկրին: «Հազարավոր օբյեկտներ, որոնք պետական են, չեն աշխատում ուղղակի կամ, չօգտագործվելու պատճառով, մաշվում են»,- նիստի ժամանակ հավելել էր Փաշինյանը: Սակայն ինչպես հաճախ է պատահում, այս անգամ եւս պարզվում է, որ Նիկոլ Փաշինյանը ընդդիմադիր պատգամավոր եղած ժամանակ դեմ է եղել «Պետգույքի մասնավորեցման 2017-2020» ծրագրի քննարկմանը, ըստ որի՝ նախատեսվում էր այլ օբյեկտներից բացի նաեւ բազմաթիվ առողջապահական կենտրոններ վաճառել: Նա մանրամասնել էր. «Հանրության լայն շերտերի շահերը շոշափող կարեւորագույն օբյեկտների սեփականաշնորհումը տեղի է ունենում առանց հանրային խորհրդարանական պատշաճ մանրամասն լսումների», - նշել էր նա եւ հավելել, որ թեեւ մասնավոր հիվանդանոցների զուգարաններից գարշահոտություն չի գալիս, բայց հանրապետությունում գործում է առողջապահական օլիգարխների համակարգը եւ այդ հիվանդանոցներում ամենասովորական անալիզների համար աստղաբաշխական գումարներ պետք է վճարել: Սակայն հեղափոխությունից հետո Փաշինյանը եւ իր թիմը ոչ միայն դեմ չեն , այլեւ նոր որոշումներ են ընդունում եւ ավելացնում՝ մասնավորեցման ենթակա գույքի քանակը: Ասել է թե՝Նիկոլ Փաշինյանը էլի խաբել է:

Ինչու է դատախազը հապաղում մտնել ԱԺ՝ պատգամավորների հետեւից: «Հայաստան» խմբակցության պատգամավորներին անձեռնմխելիությունից զրկելու համար ՀՀ գլխավոր դատախազությունը սկսել է աշխատանքները ՀՀ Ազգային ժողովի հետ: «Ժողովուրդ» օրաթերթի իրազեկ աղբյուրները փոխանցում են, որ ՀՀ ԱԺ պետահիրավական հարցերի մշտական հանձնաժողովի հետ աշխատանքային կարգով քննարկվել է՝ դատախազ Աննա Վարդապետյանի ԱԺ մտնելու եւ պատգամավորներին «տանելու» հարմար ժամանակահատվածը երբ կլինի, եւ, ԱԺ-ից հորդորել են մի փոքր սպասել: Պատճառն այն է, որ ԱԺ-ին լուրեր են հասել, թե «Հայաստան» խմբակցության մի խումբ պատգամավորներ իրենց մանդատները վայր են դնելու: Խոսքն առայժմ Վահե Հակոբյանի, Իշխան Սաղաթելյանի, Արամ Վարդեւանյանի եւ Արմեն Չարչյանի մասին է: Այսինքն՝ հնարավոր է, երբ դատախազը մտնի ԱԺ՝ պատգամավորներին անձեռնմխելիությունից զրկելու հարցով, արդեն նրանք մանդատից հրաժարվելու դիմումներ գրած լինեն, եւ անհարմար իրավիճակ ստեղծվի: Դրա համար գործընթացը փոքր-ինչ կանգ է առել: Իշխանությունը սպասում է՝ հասկանալու համար պատգամավորական մանդատներն ովքեր ինքնակամ վայր կդնեն, որից հետո նոր քայլեր կձեռնարկի, առավել եւս, որ որոշ գործերով վաղեմության ժամկետի հարցեր էլ կան: Իսկ իրականում իշխանության իրական նպատակը «Հայաստան» խմբակցությունը պառակտելն ու թուլացնելն է: Հավելենք, որ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Վահե Հակոբյանը, օրինակ, երկրում չէ, եթե համաձայնի իշխանության առաջադրած պայմանին եւ վայր դնի մանդատը, գուցե այլ գործողություններ չլինեն նրա հետ կապված:

ՀՀ Սահմանադրական դատարանում իրավիճակ է փոխվելու: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ դեկտեմբերի 10-ից հետո բարձր դատարանին հրաժեշտ են տալիս ՍԴ անդամներ Արեւիկ Պետրոսյանը եւ Աշոտ Խաչատրյանը, որոնք ՍԴ անդամ են ընտրվել նախկին իշխանության օրոք, եւ հիմա նրանց պաշտոնավարման 12 տարին լրանալու հիմքով՝ դեկտեմբերի 10-ին հեռանալու են: Նրանց կփոխարինեն ներկայիս քաղաքական իշխանության «սրտի դատավորներ» Սեդա Սաֆարյանը եւ Հովակիմ Հովակիմյանը, որոնք սեպտեմբերի 15-ին ԱԺ-ի կողմից 65 ձայներով ընտրվեցին ՍԴ անդամներ: Նկատենք, որ Հովակիմ Հովակիմյանը ներկայումս զբաղեցնում է ՀՀ նախագահի նստավայրի իրավաբանական վարչության պետի պաշտոնը: Սեդա Սաֆարյանը Մարտի 1-ի գործով տուժողի ներկայացուցիչն է՝ փաստաբան: Ավելին՝ «Ժողովուրդ » օրաթերթի տեղեկություններով ՍԴ-ում քննվող որոշ գործեր կանգ են առել ու ըստ լուրերի՝ սպասում են նոր անդամների գալուն, որը թույլ կտա ձեւավորել միատեսակ դիրքորոշում՝ կոլեգիալ որոշումներ կայացնելու համար:



Հայկական բեռնատարները, որոնց թիվը մի քանի հազարի է հասնում, դեռեւս չեն կարողանում հատել Լարսի անցակետը: Բեռնատարների շարասյունը մինչեւ Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիի մատույցներն է հասնում: Հերթի մեջ մնացած բեռանատարների վարորդներն ահազանգում են, որ դեպի Ռուսաստանի Դաշնություն հիմնականում սնունդ, միրգ ու բանջարեղեն են տանում, ինչը ժամանակի ընթացքում փչանում, անպիտան է դառնում: Հետեւաբար՝ մեծ չափերի ու գումարների վնաս են կրում: Դեռ չասած՝ երկու շաբաթից ավելի հերթի մեջ գտնվող մարդկանց տարրական՝ կենցաղային ու հիգիենիկ խնդիրները: ArmLur.am-ը Ազգային ժողովի նախագահի մամուլի քարտուղար Ծովինար Խաչատրյանից հետաքրքրվեց, թե ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի գլխավորած պատվիրակության՝ Վրաստան կատարած պաշտոնական այցի ժամանակ արդյոք քննարկվել է այս թեման: «Սիմոնյանը վրաց պաշտոնյաների հետ Լարսում բեռնատար մեքենաների հերթի թեման շոշափե՞լ է, ու արդյո՞ք եղել է դրական ինչ-որ արձագանք»,- հարցրեցինք Խաչատրյանից: Ի պատասխան՝ նա հղում արեց Ալեն Սիմոնյանի՝ վրաց պաշտոնյաների հետ ունեցած հանդիպումներից հետո հրապարակված պաշտոնական հաղորդագրություններն՝ ասելով. «Այդ հաղորդագրություններում տեղ գտած ինֆորմացիան ընդունեք ելակետային»: Իսկ «ելակետայինն» այն է, որ Լարսում այս օրերին տիրող իրավիճակի մասին պաշտոնական հաղորդագրություններում որեւէ տող չկա: Վրաստանի խորհրդարանի նախագահի հետ հանդիպումից հետո լրագրողների հետ ունեցած ճեպազրույցի ժամանակ Սիմոնյանը, ընդհանուրի համատեքստում, ասել է, որ նաեւ տրանսպորտի հետ կապված հարցերն են քննարկել: Ամենայն հավանականությամբ խոսակցությունը կամ բանակցությունը ցանկալի արդյունք կամ ընթացք չի ունեցել: Հիշեցնենք, որ ԱԺ նախագահի հետ Թբիլիսի էին մեկնել ԱԺ կրթության հանձնաժողովի նախագահ Սիսակ Գաբրիելյանը, պատգամավորներ Հակոբ Ասլանյանը, Սարգիս Խանդանյանը, Հասմիկ Հակոբյանը, Լենա Նազարյանը եւ նրա ամուսին Նարեկ Բաբայանը: Եվ այս թվով պատգամավորները ոչինչ չեն արել Լարսի՝ կիլոմետրով ձգվող հերթերի հարցը կարգավորելու ուղղությամբ. միայն ԱԺ նախագահի «կես խոսքն» է ու վերջ:

ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏՔ Է ՉԳՏԵՆՔ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ

Ազգային ժողովի նախկին դատգամավոր, «Լուսավոր Հայաստան» կուսակցության անդամ Գևորգ Գորգիսյանն ասում է, որ անընդունելի է այստեղ-այնտեղ ասել, թե Փաշինյանը միջանցքը տվել է: «Դա ոչ այլ ինչ է, քան դավաճանություն ու Ադրբեջանի շահը սպասարկել: Դա պետությանը դեմ քայլ է»,- ArmLur.am-ի հետ զրույցում շեշտում է նա:

-Պարոն Գորգիսյան հիմա «խաղաղության պայմանագր»-ի մասին խոսում են՝ կարծես եղած իրողության, եւ ի դեպ նշեմ, որ վերջերս պարոն Փաշինյանը ասաց, որ այդ պայմանագրով ոչ մի երաշխիք չկա, որ Ադրբեջանը հերթական սադրանքին չի գնա եւ կրակ չի բացի Հայաստանի տարածքի վրա, ի՞նչ է «խաղաղության պայմանագիր»-ը՝ ըստ ձեզ:

-Նախ՝ պետք է հասկանալ, որ «խաղաղության պայմանագիրը» մեզ է պետք: Մեզ անհրաժեշտ է հասկանալ մեր ներքաղաքական դաշտի արձագանքները դրան եւ մարդկանց, որ ամեն կերպ փորձում են պայքարել «խաղաղության պայմանագրի» դեմ: Պարզապես պետք է հասկանալ՝ ինչ ունենք մենք. ունենք Ադրբեջան, որ 2 տարի առաջ հաղթել է պատերազմում եւ 2020 թվականից մինչ այսօր մտնում է Հայաստանի այն տարածքները ուր ցանկանում է, եւ երբ ցանկանում է: Մենք չունենք բավականաչափ ռազմական ներուժ այս ամենին դիմակայելու համար, եւ մեզ անհրաժեշտ է «խաղաղության պայմանագիր»:Այն մեզ պետք է զարգանալու եւ մեր ռազմական ներուժը ավելացնելու համար, քանի որ անհրաժեշտ է դիմակայել այս ամենին: Ադրբեջանը եւ Թուրքիան շարունակելու են իրենց պանթյուրքական ծրագրերը եւ երբեք հետ չեն կանգնելու այդ ամենից. այս ամենին դիմակայելու համար մեզ անհրաժեշտ է ուժեղ լինել: Այդ ուժը ձեռք են բերում ժամանակի ընթացքում, որում մեզ կօգնի այս պայմանագիրը, մեր քաղաքական ուժերը կամ չեն հասկանում կամ այլ շահեր են սպասարկում. թող իրենք իրենց մեջ որոշեն՝ որ երկրի շահերն են պաշտպանում: Այս իրավիճակում անհրաժեշտ է ձգտել խաղաղության, եթե այսօր քիչ կորուստներով կարող ենք գնալ խաղաղության ապա պետք է օգտվենք այդ առիթից, քանի որ չգիտենք՝ վաղը մեզ ինչ է սպասվում:

-Իսկ այդ պայմանագիրը կնքելուց առաջ արդյո՞ք ՀՀ իշխանություններն իսկապես կարմիր գծեր են սահմանել:

-Այո, պետությունը մեզ համար այսօր սահմանել է կարմիր գծեր, այդ գծերն են՝ Հայաստանի տարածքային ամբողջականությունը, միջանցքը, (որի մասին որեւէ խոսք գնալ չի կարող դա Հայաստանի համար կարմիր գիծ է),Արցախում ապրող հայերը եւ Արցախի հարցը, որը փակված չէ՝ ինչքան էլ Ադրբեջանը պնդի: Եվ Հայաստանը պետք է միջամտի, որ Արցախը եւ ադրբեջանը խոսեն հավասարը հավասարի հետ: Այս ամենը նկատելի օրակարգեր են, եւ ես չեմ հասկանում այս օրակարգի դեմ խոսողներին: Սրանք բխում են Հայաստանի Հանրապետության շահերից եւ այստեղ-այնտեղ ասել, թե՝ Փաշինյանը միջանցքը տվել է, Հայաստանի պետականության դեմ քայլեր են: Եթե պետությունը շեշտում է, որ՝չենք տալու, սակայն որոշ հայկական ուժեր թե՛ Հայաստանում եւ թե՛ Հայաստանի սահմաններից դուրս կանգնում եւ ասում են. «արդեն տվել է միջանցքը», կոչվում է՝ դավաճանություն: Այս քայլը ես չեմ հասկանում եւ համարում եմ Ադրբեջանի շահեը սպասարկող քայլ: Մարդիկ, ովքեր ապրում են Հայաստանում, պետք է իրենց վարքագիծը վերանայեն: Նրանք դուրս են գալիս, փողոցներ են փակում, սակայն ոչ ոք իրենց ուզածը չի հասկանում. ինչ պետք է անենք մենք, եթե Փաշինյանը չլիներ իշխանությանը, մեկ ուրիշը լիներ, ապա ինչ էր փոխվելու: Միեւնույնն է՝այդ գերտերությունները չէին փոխելու իրենց շահերը: Մեր սիրուն աչքերի համար մեզ ոչ ոք ոչինչ չի տալու, եւ ժամանակն է գիտակցել այդ ամենը: Ի վերջո, անհրաժեշտ է լինել ողջախոհ եւ ադեկվատ տեղեկատվություն տրամադրել մեր հանրությանը: «Մադրիդյան փաստաթղթերը» որպես հաղթանակ են ներկայացվում, սակայն այդ փաստաթղթերով զրոյացվում է այն ամենը, ինչ բանակցվել էր. զրոյացվել է Արցախի անկախության քվեն, եւ հիմա եկել ու ասում են, թե Արցախի անկախությունն էինք բերում: Հանրաքվեն կամ ընդունում են կամ չեն ընդունում: Արցախը, երբ դուրս մնաց բանակցություններից, այդ երեւույթը դարձավ տարածքային վեճ, ու այդ ամենը որպես տարածքային վեճ ընկալեց աշխարհը: Իսկ տվյալ վեճը հարթվում է կռվով. ով ուժեղ է, կարողանում է գրավել տվյալ տարածքը, եւ վերջ: Երկար ժամանակ բոլորս էլ սխալներ ենք գործել, այժմ պետք է ադեկվատության դաշտ գանք:

Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐԻ ՇՔԵՐԹ

Նիկոլ Փաշինյանի հրամանագրերով՝ կառավարական կաբինետի ամենատարբեր դատարանային առաջիկայում գործուղումների կմեկնեն կամ արդեն գործուղման մեջ են: ArmLur.am-ը դարձեց, որ նախորդ շաբաթվա ընթացքում գործադրի ղեկավարը մի շարք գործուղումների հրամանագրեր է ստորագրել:

Այսպես՝Լոռու փոխմարզպետ Հովհաննես Ավետիսյանը դեկտեմբերի 5-7-ը Ֆրանսիա կգործուղվի: Նա Մարսելում «Միջերկրականի ապագան» համաժողովին կմասնակցի: Փոխմարզպետի գործուղման հետ կապված ծախսերը հրավիրող կողմն է հոգում:

Արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման եւ մոնիթորինգի վարչության մոնիթորինգի բաժնի գլխավոր մասնագետ Տաթեւիկ Խաչատրյանը նոյեմբերի 27-29-ն Ավստրիա կմեկնի՝Վիեննայում մասնակցելու Միջազգային հակակոռուպցիոն ակադեմիայի անդամ երկրների վեհաժողովի 11-րդ նստաշրջանին:

Ֆինանսների փոխնախարար Արման Պողոսյանը նույնպես Ավստրիա կմեկնի: Նա «Ֆինանսական եւ կայունության հաշվետվողականություն՝ հանուն պարտքի թափանցիկության եւ կայուն վերականգնման» խորագրով համաժողովին կմասնակցի: Պողոսյանը, որի գործուղման ծախսերը հրավիրող կողմն է հոգալու, Վիեննայում 5 օր կմնա՝ նոյեմբերի 28-ից դեկտեմբերի 2-ը:

Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների փոխնախարարՀակոբ Վարդանյանը երեկ՝ նոյեմբերի 21-ին, Ռուսաստանի Դաշնություն՝ Սոչի է մեկնել: Նա այտեղ «Ատոմէքսպո 2022» միջազգային համաժողովին կմասնակցի: Գործուղումը եռօրյա է, այցի հետ կապված ծախսերը հրավիրող կողմն է հոգում:

Վարչապետի աշխատակազմի կարգավորման ազդեցության գնահատման վարչության պետ Գեղամ Թովմասյանը մեկ շաբաթից ավելի Գերմանիայում կգտնվի: Նա նոյեմբերի 26-ից մինչեւ դեկտեմբերի 3-ը Բեռլինում, Վիսբադենում ու Շպայերում կգտնվի: Հրավիրող կողմի միջոցներով ֆինանսավորվող գործուղումը ճանաչողական բնույթ ունի:

Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Ռուբեն Սարգսյանը նոյեմբերի 21-25-ը Լիտվա է գործուղվել: Նա մասնակցելու է Վիլնյուսում կազմակերպված «Աշխատանքային օրենսգիրքը եւ դրա վերանայման մեխանիզմները» միջոցառմանը: Սարգսյանի գործուղման հետ կապված բոլոր ծախսերը հրավիրող կողմն է հոգում:

Առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանն էլ դեկտեմբերի 5-8-ը Շվեյցարիա է մեկնելու: Նա Ժնեւում մասնակցելու է Պատվաստանյութերի եւ իմունիզացիայի համաշխարհային դաշինքի խորհրդի նիստին: Այցի ծախսերը հրավիրող կողմն է հոգալու:

Ս. ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

ԿԱՐԵՎՈՐ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Աժ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը հանդիպում է ունեցել Հայաստանի Հանրապետությունում Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Արտակարգ եւ լիազոր դեսպան պարոն Յուն Ֆանի հետ:

«Հայաստանի Հանրապետությունում Չինաստանի Ժողովրդական Հանրապետության դեսպանատանը ունեցա շատ կարեւոր հանդիպում Արտակարգ եւ լիազոր դեսպան պարոն Յուն Ֆանի հետ: Դեսպանին տրամադրեցի փաստահեն տեղեկություն Ադրբեջանի՝2022 թվականի սեպտեմբերի ռազմական ագրեսիայի հետեւանքով իմ ծննդավայր Վարդենիսի տարածաշրջանի սահմանամերձ բնակավայրերում տեղի բնակիչների կորուստների վերաբերյալ:

Իր խոսքում դեսպանը, անդրադառնալով Հայաստանի եւ Չինաստանի դիվանագիտական հարաբերությունների հաստատումից ի վեր Չինաստանի տրամադրած օժանդակությանը, վերահաստատեց իր պատրաստակամությունը աջակցել հայ ժողովրդին:

Քննարկեցինք նաեւ փոխադարձ հետաքրքրության այլ հարցեր եւ շեշտադրեցինք, որ մեր երկու բարեկամ ժողովուրդների միջեւ առկա հարաբերությունները ամուր հիմք են՝համագործակցության զարգացման եւ նոր ծրագրերի իրականացման համար»,-նշում է Թագուհի Թովմասյանը:

ՀԱՎԵԼԱՎԱՃԱՐ

Պաշտպանության նախարարությունը հանձն է առել բարձրացնել զինվորականների աշխատավարձը, բայց դա միայն այն դեպքում, երբ զինված ուժերում ծառայողը համապատասխան «որակների ու չափորոշիչների» կբավարարի: Խոսքը զինված ուժերում ատեստավորման գործընթաց սկսելու մասին է: Այսինքն՝զինվորականը հավելավճար կարող է ստանալ միայն ատեստավորում անցնելուց հետո: Ազգային Ժողովի «Պատիվ ունեմ» խմբակցության պատգամավոր Տիգրան Աբրահամյանն ArmLur.am-ի հետ զրույցում ասում է, որ թեեւ թեստավորման կարգը սահմանելու է կառավարությունը, սակայն դեռ պարզ չէ, թե ըստ մասնագիտությունների, ծառայության առանձնահատկությունների, դրանց կիրառումը կհամապատասխանի «հողի վրա» ծառայության առաջնահերթությունների: Նրա դիտարկմամբ՝ անհասկանալի է, թե ինչպես է վերահսկվելու գործընթացը: «Իսկ եթե դա դուրս գա վերահսկողությունից, ապա կոռուպցիոն ռիսկեր կարող է ունենալ, ինչն էլ իր հերթին վնասելու է զինված ուժերին:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԳՐՈՀՆԵՐ

Պարզվում է՝ «պալատական խարդավանքներ» հյուսողի հաստիք կա ՀՀ Կառավարությունում: Պետական միջոցներից աշխատավարձ ստացող պետական պաշտոնյան ծառայում է ոչ թե Հայաստանի հանրապետությանը, այլ զբաղված է ներիշխանական ինտրիգներ ու խարդավանքներ հյուսելով: Եվ որպեսզի արդարացնի իր գործունեությունը, նկատվի Նիկոլ Փաշինյանի կողմից, երբեմն ընդդիմադիր գործիչների վրա, ինտերնետային հարձակումներ է կազմակերպում: Այն, որ վարչապետի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Տարոն Չախոյանը ֆեյքային գրոհներ է կազմակերպում Նիկոլ Փաշինյանին քննադատողների նկատմամբ, մեկ անգամ չէ, որ բարձրաձայնվել է: Կառավարական կաբինետում կատարվող անցուդարձին քաջատեղյակ «Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրի փոխանցմամբ՝Չախոյանը ցանկանում է իր վերադասի՝ աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանի տեղը զբաղեցնել: Գործադիրից մեզ վստահեցնում են, որ դրա համար Չախոյանը ոչնչի առջեւ կանգ չի առնում՝ իր վերադասի աթոռին հայտնվելու համար: Հարությունյանի թերությունները, բացթողումները եւ սկանդալային պատմությունները, որ հայտնվում են մամուլի էջերում, երբեմն ուղղորդվում են հենց Չախոյանի կողմից: Նա ամեն գնով ցանկանում է շահել Նիկոլ Փաշինյանի վստահությունը, բայց դա նրան դեռ չի հաջողվում:

ՄՏԵՐՄՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՆ

Արցախի «Միասնական հայրենիք» կուսակցության առաջնորդի Facebook-յան պաշտոնական էջից տեղեկանում ենք, որ նա տարբեր համայնքներում՝ Մարտունիում, Ասկերանում, Մարտակերտում, քաղաքացիների հետ հանդիպումներ է ունենում: «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ նա տեղացիների հետ զրույցում փորձում է տրամադրություններ ստեղել (ինչ-որ առումով նաեւ համոզել), որ ինքն ու իր կուսակից-համախոհները հայաստանյան իշխանությունների եւ, մասնավորապես, Նիկոլ Փաշինյանի հետ մտերմություն չունեն: Մեր աղբյուրի փոխանցմամբ՝ Բաբայանն ուղիղ կամ շատ սուր չի քննադատում կամ վատախոսում Փաշինյանի հասցեին, բայց բոլորի ներկայությամբ, Հայաստանի իշխանությունների՝ մանր-մունր թերացումները մատնանշելով, փորձում է հասկացնել, թե ինքը նույնպես ընդդիմադիր դաշտում է: Մեր տեղեկություններով՝զրույցների ժամանակ Բաբայանը համեմատություններ է անցկացնում 1990-ականների հետ ու ասում, թե այսօր էլ այդ օրերի նման պետք է միասնական լինել: Հետաքրքրականն այն է, որ Փաշինյանի կամ Հայաստանում իշխող քաղաքական ուժի այլ անդամների հետ մտերմություն ունենալու հանգամանքը մերժող Սամվել Բաբայանի՝ հայաստանյան կուսակցությունը՝ «Ազատական»-ը, Արթիկ համայնքում տեղի ունեցած ՏԻՄ ընտրություններից հետո իշխող ՔՊ-ի հետ կոալիցիա է կազմել: Հետեւաբար՝ բնական հարց է առաջանում, եթե Բաբայանը փորձում է չեզոքացնել իր եւ Փաշինյանի կապը, ապա ինչպե՞ս է իր առաջնորդած կուսակցությունը ՔՊ-ի հետ քաղաքական համագործակցության գնում:

ԸՆԴԻՄԱԴԻՐՆԵՐ

ՈՎՔԵՐ ԿՀՐԱԺԱՐՎԵՆ ՄԱՆԴԱՏԻՑ

Ընդդիմադիր մի շարք պատգամավորներ ստիպված կլինեն իրենց մանդատներին հրաժեշտ տալ:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ԱԺ-ն արդեն իսկ ունի այն պատգամավորների ցանկը, ովքեր նախնական հաշվարկով բացակայել են աշնանային նստաշրջանի քվեարկությունների կեսից ավելին: Իհարկե, դեռ աշնանային նստաշրջանը չի ավարտվել, քառօրյա հերթական նիստերը նախատեսված են դեկտեմբերի սկզբին, եւ գուցե մի քանի արտահերթ նիստեր եւս լինեն, բայց նույնիսկ այդ պարագայում արդեն շատ ընդդիմադիր պատգամավորներ հատել են թույլատրելի բացակաների շեմը. Նրանք են.

1) Իշխան Սաղաթելյանը՝ «Դաշնակցություն»-ից
2) Վահե Հակոբյանը՝ «Վերածնվող Հայաստան» կուսակցությունից
3) Արամ Վարդեւանյանը՝անկուսակցական
4) Հռիփսիմե Ստամբուլյանը՝ «Վերածնվող Հայաստան» կուսակցությունից
5) Ելենա Կիրակոսյանը՝ «Վերածնվող Հայաստան» կուսակցությունից

Ամենայն հավանականությամբ նրանք բոլորն էլ պատգամավորական իրենց մանդատներից կհրաժարվեն նախապես՝ ինքնակամ:

Հավելենք, որ միայն Արամ Վարդեւանյանի դեպքում է իրավաբանորեն հնարավոր հարգելի համարել նրա բացակաները, քանի որ առողջական խնդիրների պատճառով է բացակայել վերջին նիստերից: Մյուսների բացակաները անհարգելի են ըստ ՀՀ Ազգային ժողովին մոտ կանգնած «Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրների:

ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀԱՅ ԵՎ ԻՐԱՆՅԻ ԴԻՎԱՆԱԳԵՏՆԵՐ

Հայաստանի փոխարտգործնախարար Մնացական Սաֆարյանը նախօրեի երեկոյան՝ Թեհրանում բանակցություններ է վարել Իրանի արտաքին գործերի նախարար Հոսեյն Ամիր Աբդոլահիանի հետ: Նրանք քննարկել են երկկողմ եւ տարածաշրջանային հարցեր:

Սաֆարյանը բարձր է գնահատել Իրանի սկզբունքային եւ կառուցողական դիրքորոշումը՝ տարածաշրջանի երկրների ինքնիշխանության եւ միջազգային սահմանների անփոփոխելիության նկատմամբ:

Մեկնաբանելով Իրանի արտաքին գործերի նախարարի վերջերս Հայաստան կատարած այցը եւ Կապանում ԻԻՀ-ի գլխավոր հյուպատոսության բացումը՝ Սաֆարյանն այդ իրադարձություններն անվանել է բեկումնային պահ երկու երկրների միջեւ հարաբերությունների համար:

ԱՇՆԱՆԱՅԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ

Սույն թվականի նոյեմբերի 18-21-ը Մադրիդում ընթանում են ՆԱՏՕ ԽՎ աշնանային նստաշրջանի աշխատանքները: ՀՀ Ազգային ժողովի պատվիրակությունը ՀՀ ԱԺ պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանի ղեկավարությամբ նույնպես մասնակցում է խորհրդարանական վեհաժողովի 68-րդ ամենամյա նստաշրջանին: ՀՀ ԱԺ պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնա հայտնում են, որ Անդրանիկ Քոչարյանը եւ պատվիրակության անդամ՝ պատգամավոր Վահագն Ալեքսանյանը մասնակցում են տնտեսական եւ անվտանգության հարցերի, տաղաքական, տիտության եւ տեխնոլոգիայի, տողովրդավարության եւ անվտանգության, ինչպես նաեւ՝պաշտպանության եւ անվտանգության հարցերով հանձնաժողովների նիստերին: Նշված հանձնաժողովների նիստերին այս անգամ մասնակցում է նաեւ «Հայաստան» դաշինքի պատգամավոր Աննա Գրիգորյանը:

ԿԸՀ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ՄՈԼԴՈՎԱՅՈՒՄ

Մոլդովայի կենտրոնական ընտրական հանձնաժողովի հրավերով նոյեմբերի 21-22-ը Հայաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովի քարտուղար Արմեն Սմբատյանը եւ ԿԸՀ Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության ղեկավար Տիգրան Բաբիկյանը կլինեն Քիշնեւում: ԿԸՀ-ից հայտնում են, որ Հայաստանի ԿԸՀ ներկայացուցիչները հրավիրված են Մոլդովայի ԿԸՀ-ի հիմնադրման 25-ամյակի միջոցառմանը: ԿԸՀ քարտուղար Արմեն Սմբատյանը կներկայացնի նաեւ ՀՀ ԿԸՀ-ի դրական փորձը:

2,5 ՄԼՆ ՀՀ ԴՐԱՄ ԿԱՇԱՌՔ

ԴԵՊՔԻ ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԱՐՏՎԵԼ Է

Երեւանի քաղաքաշինարանի Կենտրոն վարչական շրջանի պատասխանատու անձի կողմից կաշառք ստանալու եւ ծառայողական լիազորությունները չարաշահելու դեպքերի առթիվ ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտում նախաձեռնված եւ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում քննված քրեական վարույթի նախաքննությամբ հիմնավորվել է, որ քաղաքաշինարանի Կենտրոն վարչական շրջանի համաքաղաքային բաժնի առաջին կարգի մասնագետ Է. Վ.-ն Կենտրոն վարչական շրջանում առեւտրային գործունեությամբ զբաղվող Հ. Հ.-ի, Ա. Ս.-ի, Լ. Մ.-ի եւ Ս. Հ.-ի օգտին աղօրինի անգործության, այն է՝ նրանց կողմից իրականացվող գործունեության հետ կապված իրավախախտումները չարձանագրելու եւ նրանց պատասխանատվության չենթարկելու ուղղությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում համաքաղաքային գործողություն չկատարելու համար հիշյալ անձանցից պահանջել եւ ստացել է ընդհանուր շուրջ 2,5 միլիոն ՀՀ դրամ կաշառք:

Մասնավորապես՝ առանց թույլտվության բացօթյա առեւտուր իրականացնելու հանգամանքը չարձանագրելու եւ պատասխանատվության չենթարկելու համար Է. Վ.-ն Ս. Հ.-ից, Հ. Հ.-ից եւ Լ. Մ.-ից որպես կաշառք պահանջել եւ բուքմեյքերական ընկերության՝ իր կողմից օգտագործվող խաղային հաշվին փոխանցման միջոցով 2022 թվականի հունիսից օգոստոսը ներառյալ պարբերաբար ստացել է 10.000-25.000-ական ՀՀ դրամ կաշառք /ընդհանուր՝ 135.000 ՀՀ դրամ/:

Բացի այդ, Երեւանի քաղաքապետի թույլտվության սահմանափակման ենթակա ծառայության ոլորտում ապօրինի գործունեություն իրականացնելը չարձանագրելու համար Է. Վ.-ն Ա. Ս.-ից որպես կաշառք յուրաքանչյուր ամիս պահանջել է 1.200 ԱՄՆ դոլար գումար: Արդեն ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ 2022 թվականի հունիսից հոկտեմբերն ընկած ժամանակահատվածում Ա. Ս.-ն Է. Վ.-ին առձեռն փոխանցել է խոշոր չափերի՝ ընդհանուր 2.356.514 ՀՀ դրամին համարժեք 5.800 ԱՄՆ դոլար կաշառք:

Վերը նշված հանցավոր արարքների համար Է. Վ.-ին մեղադրանք է ներկայացվել ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով /2 դրվագ/ եւ ՀՀ քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածի 2դդ մասի 2-րդ եւ 3-րդ կետերով: Նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանքը:

Լ. Մ.-ին մեղադրանք է ներկայացվել ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածի 1-ին մասով, Ա. Ս.-ին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 436-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ եւ 3-րդ կետերով, Վ. Հ.-ին եւ Ս. Հ.-ին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 436-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով:

Քրեական վարույթի նախաքննությունն ավարտվել է: Վարույթի նյութերը մեղադրական եզրակացությամբ հանձնվել են հսկողություն իրականացնող դատախազին՝ այն հաստատելու եւ դատարան ուղարկելու միջնորդությամբ:

ՆԱԽԿԻՆ ՏԵՂԱԿԱԼԻ ԳՈՐԾԸ

ՄԱՄՆԱԿԻ ԲԱՎԱՐԱՐՎԵԼ Է

ՀՀ ԱԺ նախկին նախագահ Գալուստ Սահակյանի որդու՝ առողջապահության նախարարի նախկին տեղակալ Տիգրան Սահակյանի գործը որոշվել է տեղափոխվել Հակակոռուպցիոն դատարան:

Ըստ նախաքննական մարմնի՝ Տիգրան Սահակյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա խաբեության եղանակով պետությանը պատճառել է առանձնապես խոշոր չափի վնաս, ինչպես նաեւ քաղաքացիական գործի շրջանակներում ներկայացրել է կեղծ ապացույցներ: Ի դեպ, վերջինիս հետ մեղադրյալի աթոռին են հայտնվել եւս 4 անձ: Այս գործով նախաքնությունը ավարտվել է, եւ գործը 2020 թվականին ուղարկվել է դատարան եւ երկու տարի քննություն էր իրականացվում, եւ հիմա որոշվել է այն ուղարկել Նոր ստեղծված Հակակոռուպցիոն դատարան:

Ի դեպ, ArmLur.am-ը գրել էր, որ մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ Ազգային ժողովի նախկին նախագահ Գալուստ Սահակյանի որդին՝ Տիգրան Սահակյանը, խնդրանքով դիմել է դատարան:

Տիգրան Սահակյանը դատավոր Հարություն Մանուկյանին հայտնել է, որ իր գույքը շուրջ տասն ամիս է՝ գտնվում կալանքի տակ, եւ ինքը, զրկված լինելով այն օգտագործելու հնարավորությունից, միաժամանակ կատարում է այդ գույքի պահպանման համար անհրաժեշտ կոմունալ վճարումները, ինչպես նաեւ վճարում է գույքահարկ: Ավելին՝ Սահակյանը հայտնել է, որ ինքն այժմ չի աշխատում, ինչպես նաեւ չի կարողանում մեկնել արտասահման, ուստի, այդ գույքի պահպանման անհրաժեշտությունից ելնելով՝ խնդրել է թույլատրել այն հանձնել վարձակալության:

Դատախազը, առարկելով գույքի վրա դրված կալանքը վերացնելու դեմ, նշեց, որ նախաքննության ընթացքում՝ մինչեւ վերջնական դատական ակտի կայացումը մեղադրյալի գույքի վրա կալանք դնելը իրավաչափ է եւ օրինական:

Ինչեւէ, դատավոր Մանուկյանը, լսելով կողմերին, որոշում է կայացրել եւ մասնակի բավարարել է Գալուստ Սահակյանի որդու խնդրանքը:

Մասնավորապես՝ ArmLur.am-ին հայտնի դարձավ՝ դատավոր Հարություն Մանուկյանը որոշել է թույլատրել Տիգրան Գալուստի Սահակյանին սեփականության իրավունքով պատկանող գույքը հանձնել վարձակալական հիմունքներով, իսկ կալանքը վերացնելու մասով միջնորդության քննությունը հետաձգել եւ դրան անդրադառնալ վերջնական դատական ակտով:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՈՉ ՈՔ ՊԱՏԱՍԽԱՆ ՉԻ ՏՎԵԼ

Երեկ լրացավ Եռաբլուրում զոհված զինծառայողների ծնողներին բռնության ենթարկելու միջադեպի երկրորդ ամիսը, սակայն մինչ օրս միջադեպով որեւէ մեկը պատասխանատվության չի ենթարկվել:

Նշենք, որ օրերս «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ մեր տեղեկություններով՝ 2022 թվականի սեպտեմբերի 21-ին Եռաբլուրում տեղի ունեցած խայտառակ միջադեպի առիթով ծառայողական քննությունը կասեցվել է: Հիշեցնենք, որ Եռաբլուր զինվորական պանթեոնում տեղի ունեցած քաշքշուկի առիթով ՀՀ ոստիկանության Ներքին անվտանգության վարչությունում ծառայողական քննություն էր սկսվել:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում գործի կասեցման մասին մեր ունեցած տեղեկությունը հաստատեց ՀՀ ոստիկանության պետի տեղակալ Արա Ֆիդանյանը: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ երբ Քննչական կոմիտեում քրեական գործ կամ վարույթ է հարուցվել, ոստիկանությունը որոշել է Ներքին անվտանգության վարչությունում առկա քննությունը կասեցնել մինչեւ այդ քրեական գործի ավարտը: Այսինքն՝ Քննչական կոմիտեի քննության ավարտից հետո ոստիկանության ղեկավարությունը իր համապատասխան քայլերը կիրականացնի:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ միջադեպից միայն մի քանի օր անց հարուցված քրեական գործով մինչեւ օրս որեւէ ոստիկան կամ հրաման տվող սպա պատասխանատվության չի ենթարկվել: Նշենք, որ կան ծնողներ, որոնց մարմնական վնասվածքներ ստանալու փաստը փորձաքննությամբ հաստատված է, ծնողները տուժող են ճանաչվել, սակայն ոչ ոք պատասխանատվություն չի կրել առ այսօր:

Թերեւս չի էլ լինի պատիժ, քանի որ այդ ծեծն ակնհայտորեն ուներ քաղաքական հրահանգ, ու այդ մասին վկայում է շուրջ երկու ամիս տեւող քննությունը, որի արդյունքում մինչ օրս չկա մեղադրյալ:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԿԵՂԾՎԵԼ ԵՆ

ՀՀ գլխավոր դատախազություն հանցագործության վերաբերյալ հաղորդում է ներկայացվել այն մասին, որ 2021 թվականին կայացված տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքները ՀՀ Սյունիքի մարզի Տաթեւ համայնքի թիվ 34 ընտրատարածքում կեղծվել են:

Այսպես՝ մի կողմից նշված տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը անվավեր է ճանաչել քվեաթերթիկներում կատարված նշումները, մյուս կողմից՝ վավեր է ճանաչել նույն նշումներով քվեաթերթիկներում կատարված նշումները՝ հօգուտ «Շանթ դաշինք» ազգայնական կուսակցության եւ «Ապրելու երկիր» կուսակցության, ինչն էլ ընտրված ճանաչվելու իրավունքից զրկել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված՝ համապատասխան ձայներ հավաքած թեկնածուներից մեկին:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ նոյեմբերի 18-ից 21-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 113 դեպք, որից 7-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ՀԱՅ–ՌՈՒՍԱԿԱՆ ԽԱՉՔԱՐ

Մոտ տասը օր առաջ Նոյեմբերյան խոշորացված համայնքի սահմանամերձ Ոսկեպար գյուղի տարածքում՝ Ռուսաստանի զինուժի համար կառուցված զորանոցի մոտ, Հայաստան-Վրաստան միջպետական ավտոճանապարհի եզրին կանգնեցվել է խաչքար, որի կեսը հայկական խաչ է, կեսը՝ռուսական խաչ: Ոսկեպարի բնակիչները չգիտեն, թե ով է կանգնեցրել կարմիր տուֆից կերտված այդ խաչքարը: Ոսկեպարցիները չգիտեն նաեւ, թե որն է իրենց գյուղում ռուսական զինուժի առաքելությունը: Ենթադրվում է, որ այդտեղ տեղակայված ռուսական զինուժի միջնորդությամբ է կատարվելու հայ-ադրբեջանական սահմանի դեմարկացիան: Ռուսական զինուժը Ոսկեպարում է գտնվում 2021թ. օգոստոսի սկզբից: Նոյեմբերյանի սահմանագոտու բնակիչները մտահոգություն ունեն, որ առաջիկայում կատարվելիք դելիմիտացիայի եւ դեմարկացիայի հետեւանքով Հայաստանը տարածքային կորուստներ է ունենալու:

ԲԵՐՔԸ ՓՉԱՆՈՒՄ Է

Իջեւան խոշորացված համայնքի սահմանամերձ Բերքաբեր գյուղում աճեցված արքայանարնջի (королек) բերքի իրացման հետ կապված լուրջ խնդիր կա: Բերքաբեր բնակավայրի վարչական ղեկավար Տիգրան Հարությունյանը հայտնեց, որ Բերքաբերում արքայանարնջի մոտ 50 տոննա բերք կա: Նախորդ տարիներին սառնարան-բեռնատար մեծ ավտոմեքենաների տերերը եւ ջրանոց ունեցողները գյուղացիներից գնում էին արքայանարինջը, իսկ այս աշնանը նրանք Բերքաբեր չեն գնացել: Գյուղացիները չեն ցանկանում իրենց միրգը շատ էժան վաճառել, բնակավայրի վարչական ղեկավարն ասաց, որ Արմավիրի մարզում գործող Մեյմանդարի մեծածախ շուկայում արքայանարնջի կիլոգրամի գինը 180-200 դրամ է, ինչը բերքաբերցիներին ձեռնտու չէ: Սահմանամերձ գյուղում առկա է շուրջ 20 հեկտար արքայանարնջի այգի, կան նաեւ նորատունկ այգիներ, որոնք դեռեւս բերք չեն տալիս: Բերքաբեր գյուղն ունի մոտ 760 հեկտար տարածք, որոնք, գտնվելով, փաստացի հայ-ադրբեջանական սահման դարձած Ջողազի ջրամբարի ձախ ափին, արդեն 30 տարի գտնվում են ադրբեջանական զինուժի վերահսկողության տակ:

ԴՐՈՇԸ ՊԱՏՌՎԱԾ Է

Մոտ մեկ տարի առաջ Տավուշի մարզի սահմանագոտում՝ Իջեւան խոշորացված համայնքի Կիրանց եւ Նոյեմբերյան խոշորացված համայնքի Ոսկեպար գյուղերի սահմանին, Հայաստան-Վրաստան միջպետական ավտոճանապարհի եզրին գտնվող բլրին ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակից զինվորականները մեծ դրոշակաձող են կանգնեցրել, որի վրա ծածանվում է հայկական եռագույն դրոշը: Այդ դրոշն այժմ պատռված է. պատռված դրոշը Հայաստանի քաղաքացիներից զատ, ամեն օր տեսնում են նաեւ ճանապարհով երթեւեկող օտարերկրացիները: Վարչապետ Նիկոլ Փաշինյանը մի քանի տարի առաջ երիտասարդ պաշտոնյային նվաստացրեց մաքսակետում գետնին դրված դրոշի համար: Պատռված դրոշի համար նա պաշտպանության նախարարությանը նախատինք չունի՞:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՀԱՄԱՁԱՅՆԵԼ ԵՆ

ԿԿՆՔԵՆ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Արդարադատության նախարարության «Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Դավիթ Ղուլյանի գլխավորած պատվիրակությունը, որի կազմում էին կենտրոնի հանրային կապերի պատասխանատու Արփի Ադամյանը, կենսաբանական եւ թմրամիջոցների քիմիական, ձեռագրաբանական եւ փաստաթղթաբանական, տնտեսագիտական փորձաքննությունների բաժնի ղեկավարներ՝ Արթուր Անդրեասյանը, Վահե Գրիգորյանը, Սամվել Հովհաննիսյանն ու կենտրոնի ավագ փորձագետ Կարեն Աբրահամյանը, նոյեմբերի 16-18-ը հանդիպում է ունեցել Վրաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր Լևան Սամխարաուլիի անվան ազգային քրեագիտական բյուրոյի ղեկավար Մամուկա Ջանգուլաշվիլիի եւ Վրաստանի ՆԳՆ դատաբժշկական դեղարտամենտի ղեկավար Գեորգի Տվաուրիի հետ:

Այցի շրջանակներում Դավիթ Ղուլյանի գլխավորած պատվիրակությունը ծանոթացել է երկու փորձագիտական կենտրոններում փորձաքննություններ իրականացնող բոլոր բաժիններին, լաբորատորիաներում կատարվող փորձաքննությունների տեսակներին ու ենթատեսակներին, ինչպես նաեւ՝ Ազգային քրեագիտական բյուրոյի ԴՆԹ իրականացնող լաբորատորիայի պայմաններին ու սարքավորումներին:

Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են փորձաքննությունների ժամկետների, դրանց կատարման ընթացակարգերի եւ օրենսդրական կարգավորումների, փորձագետի որակավորման ու ատեստավորման, նրանց վերապատրաստման, ինչպես նաեւ՝ մեթոդների ու մեթոդիկաների, բազաների ու մասնագիտական գրականության վերաբերյալ մի շարք հարցեր: Դավիթ Ղուլյանը հանդիպման երկկողմ մասնակիցներին ներկայացրել է Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոնի բաժիններն ու փորձաքննությունների տեսակները, վերջին սերնդի սարքավորումներն ու դրանց հնարավորությունները, փորձագետ դառնալու կարգն ու պարտականությունները, այդ թվում՝ արդի խնդիրներն ու դրանց լուծումների առնչությամբ կենտրոնում ընթացքի մեջ գտնվող բարեփոխումների ուղղությունները, վերջին մեկ տարում կենտրոնի ձեռքբերումներն ու դրանք ընդլայնելու արդյունավետ գործընթացները:

Դավիթ Ղուլյանը գործընկերների հետ քննարկել է երկուստեք հետաքրքրություն ներկայացնող բազմաթիվ այլ հարցեր:

Նշված քննարկումների շրջանակում կողմերը պայմանավորվածություն են ձեռք բերել փորձագիտական ոլորտում հայ-վրացական փոխգործակցությունը խորացնելու, համագործակցության հետագա շարունակականությունն ապահովելու եւ դրանց ընդլայնման ուղղությամբ համատեղ գործողությունների ծրագրեր մշակելու մի շարք քայլեր, ինչպես նաեւ փորձի փոխանակման, երկու երկրների փորձագետների աշխատանքի որակի բարելավման, ունեցած մասնագիտական գիտելիքների հարստացման նպատակով, հետագայում ակտիվ ու արդյունավետ հանդիպումներ, քննարկումներ կազմակերպել նաեւ հեռավար ձեւաչափով:

Հանդիպման ավարտին կողմերը, բարձր գնահատելով արդյունավետ քննարկումները, համաձայնություն են հայտնել առաջիկայում կառույցների միջեւ կնքել փոխգործակցության խորացման մասին համագործակցության հուշագիր՝ նպաստելով փորձագիտական ոլորտի բարձրորակ մասնագետների պատրաստմանն ու վերապատրաստմանը, ինչի արդյունքում էլ ավելի կամրանա միջպետական փոխգործակցությունը երկու բարեկամ երկրների միջեւ:

ԼՈՒՐԵՐ

ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի հրամանով հաստատված հանրակրթական հիմնական ընդհանուր, մասնագիտացված եւ հատուկ պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2022-2023 ուսումնական տարիների օրինակելի ուսումնական պլաններում սահմանվել են դպրոցականների արձակուրդների օրերը:

Առաջին եւ երկրորդ դասարանցիների ձմեռային արձակուրդները տրամադրվում են 2022թ. դեկտեմբերի 26-ից 2023թ. հունվարի 22-ը ներառյալ:

3-12-րդ դասարանների սովորողներին ձմեռային արձակուրդները տրամադրվում են 2022 թ. դեկտեմբերի 26-ից 2023 թ. հունվարի 8-ը ներառյալ:

Ըստ ուսպլանի՝ ԿԳՄՍ նախարարությունն անհաղթահարելի ուժի առաջացման դեպքում (եղանակային անբարենպաստ պայմաններ, սուր վարակիչ հիվանդությունների տարածում, տարերային աղետ եւ այլն) կարող է սահմանել լրացուցիչ արձակուրդ՝ կատարելով փոփոխություններ ուսումնական պարապմունքների եւ սովորողների համար սահմանված արձակուրդների ժամանակացույցներում:

Այդ փոփոխությունները կարող է կատարել նաեւ ուսհաստատությունը՝ բաց թողնված ժամերը մինչեւ ուսումնական պարապմունքների ավարտը լրացնելու կամ ուսումնական պարապմունքները հեռավար եղանակով կազմակերպելու՝ լիազոր մարմնին տեղեկացնելու պայմանով: Սահմանվել է նաեւ, որ 2022-2023 ուստարվա պարապմունքներն ավարտվում են 2023թ. մայիսի 26-ին՝ 5-օրյա աշխատանքային շաբաթվա եւ մայիսի 27-ին՝ 6-օրյա աշխատանքային շաբաթվա դեպքում՝ ապահովելով առնվազն 30 ուսումնական շաբաթ՝ առաջին, 32՝ երկրորդ եւ 34՝ երրորդից տասներկուերորդ դասարանների համար:

ՋՐԱՍՈՒԶԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐ

Քաղաքացիական պաշտպանության հարցերի, արտակարգ իրավիճակների կանխարգելման եւ հետեւանքների վերացման հիմնական միջոցառումների պլանի շրջանակում, ԱԻ պետական ծառայության փրկարար ուժերի վարչության ծառայողները հերթական ջրասուզական պարապմունքն են անցկացրել:

Ջրափրկարարները ձմեռային սուզման համար նախատեսված հատուկ չոր անջրանցիկ հանդերձանքով ստորջրյա վարժանքներ են իրականացրել, որի նպատակը մասնակիցների մասնագիտական ունակությունների որակի բարձրացումն է, ինչպես նաեւ՝ ջրի ջերմաստիճանին ադապտացվելը: Ծառայությունում գործնական պարապմունքներ եւ տարբեր թեմաներով դասընթացներ հաճախակի են կազմակերպվում եւ գտնվում են ՆԳ նախարարության եւ ԱԻ պետական ծառայության ղեկավար կազմի ուշադրության կենտրոնում: ԱԻ պետական ծառայությունը ապահովված է անհրաժեշտ տեխնիկական միջոցներով եւ սարքավորումներով՝ տարվա բոլոր եղանակներին փրկարարական եւ ջրասուզական աշխատանքներ իրականացնելու համար: Ջրափրկարարներն էլ ունեն մեկ տասնյակ տարուց ավել ջրասուզական փորձ եւ բավարար գիտելիք՝ կատարելու տարբեր բարդության առաջադրանքներ:

● Անցած 3 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 50 ՃՏՊ. 5 մարդ զոհվել է, 65-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԼՈՒՐԵՐ

ԽՐԱԽՈՒՄԱՆՔ՝ ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻՆ

Գործազուրկ անձանց հետ առնվազն մեկ տարի ժամկետով աշխատանքային պայմանագիր կնքելու դեպքում պետության կողմից գործատուին կտրամադրվի միանվագ փոխհատուցում՝ 250,000 դրամի չափով, իսկ նպաստառու գործազուրկի աշխատանքի ընդունելու դեպքում՝ 350,000 դրամի չափով (ընդ որում՝ աշխատանքային պայմանագիրը չի կարող կնքվել ոչ լրիվ աշխատաժամանակի ռեժիմով): Այս մասին հայտնում են ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունից:

Ծրագրում կարող են ներգրավվել այն գործատուները, որոնք համապատասխանում են հետեւյալ չափորոշիչներին՝ չեն հանդիսանում հանրային ծառայություն իրականացնող պետական կառավարման համակարգի մարմին, մինչեւ ծրագրի համար դիմում ներկայացնելը գործել են առնվազն երկու տարի անընդմեջ, վերջին երեք ամսվա ընթացքում անընդհատ ունեցել են առնվազն 10 վարձու աշխատող, նրանց կողմից հաշվարկված եկամուտների փաստացի ֆոնդը նշված ժամանակահատվածում չի նվազել, կամ նվազումը կազմել է ոչ ավելի, քան 5 տոկոս:

ՎԱՐՈՐԴՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ

Նախորդ շաբաթ «Երեւանի ավտոբուս» ընկերության կողմից թվով 2208 շարժակազմ գտնվել է շահագործման մեջ, ունեցել ենք 21 ավտովթար՝ առանց լուրջ հետեւանքների: Այս մասին այսօր՝ նոյեմբերի 21-ին, Երեւանի քաղաքապետարանում գործակարգավարական խորհրդակցության ժամանակ նշեց «Երեւանի ավտոբուս» ՓԲԸ տնօրեն Էլբակ Թարփոշյանը:

Նա տեղեկացրեց, որ արդեն դուրս գրված «Բոգդան» եւ «ՊԱԶ» մակնիշի ավտոբուսները աճուրդի են դրված, բայց դեռ ընկերության տարածքում են գտնվում:

Քաղաքապետ Հրաչյա Սարգսյանը հետաքրքրվեց, թե ինչ խնդիրներ կան կապված 150 նոր ավտոբուսների, 15 նոր տրոլեյբուսների, նաեւ «ՄԱՆ» ավտոբուսների հետ, որոնք առաջիկայում կլինեն Երեւանում:

Թարփոշյանը պատասխանեց, որ ոչ մի խնդիր չունեն. «Եթե մեզ մոտ շինարարական աշխատանքներ չեն կատարվում, մենք տեղավորում ենք ավտոբուսները մեր 4 պարկերում»:

Քաղաքապետը հանձնարարեց սկսել վարորդների հավաքագրման աշխատանքները. «Վարորդների մասով սկսեք արդեն մտածել, որպեսզի ավտոբուսները գան, մենք վարորդների խնդիր չունենանք: Երկշաբաթյա ժամկետում զեկուցեք՝ ինչ աշխատանքներ եք իրականացրել: Հիմիկվանից սկսենք վարորդների հավաքագրումը»:

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ԿԱՄԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը հայտարարում է դրամաշնորհային մրցույթ՝ երիտասարդական աշխատանքի և կամավորության խթանման նպատակով:

ԿԳՄՍՆ-ից Armlur.am-ին հայտնում են, որ մրցույթի շրջանակում նախատեսվում է «Երիտասարդների համար երիտասարդական աշխատանքի եւ կամավորության խթանում» նպատակի իրագործման համար հաղթող մասնակցին (մասնակիցներին) տրամադրել առավելագույնը 5 մլն դրամ դրամաշնորհ (ներառյալ՝ ԱԱՀ-ն), որի շրջանակում կարող են կնքվել մեկից ավելի պայմանագրեր:

Հաղթող ճանաչված մասնակցի դրամաշնորհային հայտով ներկայացված ծրագրում ընդգրկվող շահառուների թիվը պետք է կազմի նվազագույնը 60:

Մրցույթին մասնակցելու համար մասնակիցը (կազմակերպությունը) պետք է բավարարի հետեւյալ նվազագույն որակավորման տվյալների չափանիշներին.

1) առնվազն 3 նմանատիպ ծրագրերի իրականացման փորձառություն,

2) ծրագրի աշխատակազմի փորձառություն,

3) ըստ անհրաժեշտության՝ ծրագրի իրականացման համար նշված ոլորտում հրավիրված մասնագետների փորձառություն:

Որակավորման չափանիշների գնահատման համար մասնակիցը հայտով ներկայացնում է հետեւյալ փաստաթղթերը՝

առնվազն 3 նմանատիպ ծրագրերի իրականացման փորձառությունը հավաստող պայմանագրերի պատճենները, իսկ պատճենների ներկայացման անհնարինության դեպքում՝ փաստացի ապացույցներ ծրագրերի իրականացման մասին՝ նկարներ, տեսանյութեր, հանրային գրառումներ, հրապարակումներ, հոդվածներ եւ այլն, ծրագրի աշխատակազմի փորձառությունը հավաստող փաստաթղթեր՝ ինքնակենսագրականներ, վկայականներ, հավաստագրեր, աշխատակազմի անդամի կողմից գրավոր համաձայնություն ծրագրում իր ներգրավվածության վերաբերյալ, հրավիրված մասնագետների փորձառությունը հավաստող փաստաթղթեր՝ ինքնակենսագրականներ, վկայականներ, հավաստագրեր, աշխատակազմի անդամի կողմից գրավոր համաձայնություն ծրագրում իր ներգրավվածության վերաբերյալ:

Մասնակիցները կարող են մրցույթին մասնակցել նաեւ համատեղ գործունեության կարգով:

Մրցույթի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել համակարգի միջոցով ոչ ուշ, քան 2022 թվականի դեկտեմբերի 7-ը՝ ժամը 12:00-ը: Հայտերի ընդունման վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը չեն ընդունվում համակարգի կողմից:

Հայտերի եւ կցված բոլոր փաստաթղթերի (ինքնակենսագրականներ, գնային առաջարկներ, պայմանագրեր եւ այլն) ներկայացման լեզուն հայերենն է:

Մրցույթին մասնակցելու իրավունք չունեն այն կազմակերպությունները, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են պետական բյուջեից դրամաշնորհ ստանալու նպատակով կազմակերպվող մրցույթներին մասնակցելու իրավունք չունեցող կազմակերպությունների ցուցակում, որը հրապարակված է ՀՀ ֆինանսների նախարարության www.minfin.am կայքում:

Կազմակերպությունն ընդգրկվում է վերը նշված ցուցակում, եթե՝

1) որպես հաղթող հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից.

2) խախտել է կնքված պայմանագրով ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պետական մարմնի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ն.Հ.

«ԱԿԲԱ» բանկ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲԻԶՆԵՍԻ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ենոքավանի «Բերկրի» հյուրատան այցեքարտը տավուշյան բնությունն ու ընտանեկան ջերմ ընդունելությունն են. այստեղ բազմաթիվ հյուրեր են գալիս աշխարհի տարբեր մասերից:

Ավետիսյան ընտանիքի որդին՝ Դավիթն է որոշել, որ տունը պետք է դարձնել նաեւ հյուրատուն: 2018-ին սկսեց շինարարությունը, սենյակներ ավելացրեց, բացօթյա սրճարան կառուցեց եւ տունը հյուրերի համար դարձրեց ցանկալի վայր: Այստեղ աշխատում են ընտանիքով. բոլորն իրենց ներդրումն ու մասնակցությունն ունեն:

Դավիթն արդեն 4 տարի վարպետանում է նաեւ գինեգործության մեջ. «Բերկրի» գինիները շուտով կլինեն վաճառքում՝ մասնագիտացված խանութներում: Հյուրատան հյուրերին էլ առաջինը ներկայացնում է իր մառանը, գինու պատմությունը, պատրաստման եղանակը, իսկ վերջում՝ համտես կազմակերպում:

«Բերկրին» «Ակբա» ֆեդերացիայի եւ Գերմանիայի բնության պահպանության միության (NABU) «Գյուղական տուրիզմի զարգացման ծրագրի» շահառուներից է: Տրամադրված դրամաշնորհի միջոցով կառուցվել է հացի փուռ, հյուրատան համարներն են նորոգվել, կահույք է գնվել եւ հյուրատանը սկսվել է աշխատանքային եռուզեռը:

«Մեր բարեկամությունը, ընկերությունը, երբ Հայաստան էր գալիս, կամ դրսից էին գալիս մեր մարզ, պարտադիր մեր տանը պետք է սնվեին, 10-20 հոգով մեր տանն էին մնում: Ասում էին՝ ձեր սնունդը համով է, լավ եք ընդունում, սպասարկում: Այսպես ընտանիքում որոշեցինք ու ընտանեկան բիզնես ստեղծեցինք: Մի պահ էր եկել, որ սենյակների քանակը պետք է ավելացնեինք: Երկուսն ունեինք, երկուսն էլ պետք էր, բայց միջոցներ չունեինք: «Ակբա» Ֆեդերացիայից աջակցություն ստացանք, ավելացրեցինք տավուշյան կոլորիտով փուռ, ուր մաստեր կլաս ենք անցկացնում, եւ երկու ննջասենյակի վերանորոգում ու կահավորում կատարեցինք: Ներդրման շնորհիվ կարողացանք մեր ֆինանսական միջոցները կրկնապատկել»,- նշում է Դավիթ Ավետիսյանը:

«Բերկրի»-ում հյուրերի համար կազմակերպում են նաեւ փռում հացի թխման, գոբելենագործության ու գորգագործության մաստեր կլասներ, էքսկուրսիաներ եւ քայլարշավներ՝ տեղի պատմամշակութային վայրեր:

«Բերկրի» հյուրատունը գտնվում է Տավուշի մարզի Ենոքավան գյուղում:

«Ակբա» ֆեդերացիան «Ակբա» բանկի միակ նշանակալից մասնակիցն է, բանկի բաժնետոմսերում ունի ավելի քան 83.8 տոկոս մասնաբաժին: «Ակբա» բանկում ունեցած մասնակցության շնորհիվ «Ակբա» ֆեդերացիան նպաստում է Հայաստանի ողջ տարածքում գյուղատնտեսության, գյուղական շրջաններում փոքր եւ միջին բիզնեսի զարգացմանը, համայնքների զարգացմանը, գյուղական շրջաններում եւ համայնքներում բիզնես միջավայրի աշխուժացմանն ու զարգացմանը, նշված ոլորտներում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող յուրաքանչյուր անձի բարեկեցության աճին:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՆՎԻՐՎԱԾ Է ՏԵՐՅԱՆԻՆ

«ԱՇՆԱՆ ՄԵՂԵԴԻ» ՊՈԵԶԻԱՅԻ ԵՐԵԿՈ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության դրամաշնորհային աջակցությամբ «Ջավախքին աջակցություն» հիմնադրամը (ՋԱՀ) Նինոծմինդա քաղաքում իրականացրել է ««Աշնան մեղեդի» պոեզիայի երեկո» խորագրով միջոցառումը՝ նվիրված ականավոր բանաստեղծ, քնարերգու եւ հասարակական-քաղաքական գործիչ Վահան Տերյանին:

ԿԳՄՍ նախարարությունից ArmLur.am-ին հայտնեցին, որ երեկոյի ընթացքում հայերեն եւ վրացերեն հնչել են տերյանական պոեզիա, երգ ու երաժշտություն՝ գրված բանաստեղծի ստեղծագործությունների հիման վրա: Կատարումներով հանդես են եկել երգիչներ Մավր Մկրտչյանը եւ Վահագ Ռաշը: Անդրադարձ է եղել նաեւ Վահան Տերյանի տուն-թանգարանի վերականգնման ընթացքին:

ՋԱՀ-ի տնօրեն Սամվել Մկոյանը շնորհակալություն է հայտնել ԿԳՄՍ նախարարությանն աջակցության եւ գործընկերներին՝ համագործակցության համար: Նրա գնահատմամբ՝ մշակութային նմանատիպ միջոցառումները հայ-վրացական բարեկամական դարավոր կապերն ընդգծելու եւ ավելի սերտացնելու նպատակ ունեն:

«Օրն այսօր Տերյանի մասին է, եւ մենք հավաքվել ենք լսելու, ասմունքելու սիրելի բանաստեղծին: Էլ ինչ աշուն՝ առանց Տերյանի»,- ասել է Սամվել Մկոյանը եւ հավելել,- այս տարածաշրջանում մշակութային իրադարձությունները հաճախադեպ չեն, եւ սա հնարավորություն է մարդկանց համար՝ ուղղակի վայելելու միջոցառումը՝ եւս մեկ անգամ արժեւորելով Տերյան բանաստեղծին եւ գործչին»:

Միջոցառմանը ներկա են եղել Շիրակի մարզկենտրոն Գյումրու համայնքապետ Վարդգես Սամսոնյանը, Եղիշե Չարենցի տուն-թանգարանի տնօրեն Ժաննա Մանուկյանը, Դերենիկ Դեմիրճյանի տուն-թանգարանի տնօրեն Կարինե Ռաֆայելյանը, հյուրեր՝ Վրաստանից եւ Վահան Տերյանի արվեստի երկրպագուներ:

Եղիշե Չարենցի տուն-թանգարանի տնօրեն Ժաննա Մանուկյանը խորհրդանշական է համարել Չարենցի տուն-թանգարանի մասնակցությունը Տերյանին նվիրված միջոցառմանը. «Սա հրաշալի առիթ է՝ եւս մեկ անգամ ներկայացնելու եւ գնահատելու Տերյանի գործունեությունը: Չարենցյան ներկայությունն այս միջոցառմանը խորհրդանշական է, քանի որ Տերյանը, ինչպես գիտենք, եղել է Չարենցի գրական նախահայրը: Մենք այստեղից կգնանք՝ մեզ հետ տանելով տերյանական շունչը, որ տիրում էր այս միջավայրում»:

Մեծ հայերի փոքր հայրենիքում՝ Ջավախքում, նմանատիպ միջոցառումների անցկացումը դրական է գնահատել նաեւ մյուս մեծ ջավախքցի գրողի՝ Դերենիկ Դեմիրճյանի տուն-թանգարանի տնօրեն Կարինե Ռաֆայելյանը:

Հյուրերը միջոցառման շրջանակում այցելել են Կարծախ՝ Ջիվանու տուն-թանգարան, Փարվանա լիճ՝ հիանալու բանաստեղծական բնապատկերով: Շրջել են նաեւ Գանձա գյուղում, 2021 թվականին հիմնանորոգված եւ վերաբացված Վահան Տերյանի ցուցասրահում, եղել թանգարանի հուշային հատվածում, ծանոթացել բանաստեղծի հայրական տան կենսագրությանը, նրա մանկության հուշերին: Նշենք, որ այժմ մեկնարկային փուլում են թանգարանի հուշային հատվածի վերականգնման աշխատանքները:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՓԱՌԱՏՈՆ

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՀԵՏԱՔՐՔԻՐ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Երեւանում դեկտեմբերի 6-20-ը կանցկացվի Արամ Խաչատրյանի անվան 10-րդ միջազգային փառատոնը: Հոբելյանական փառատոնի շրջանակներում կներկայացվի 5 համերգ:

Խաչատրյանի անվան միջազգային փառատոնի նախաձեռնողը Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբն է՝ գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Սերգեյ Սմբատյանի գլխավորությամբ:

Երաժշտական այս տոնն ամեն տարի Հայաստանում հյուրընկալում է մեծահամբավ երաժիշտների: Նախորդ 9 տարիների ընթացքում ելույթ են ունեցել ականավոր արտիստներ Մաքսիմ Վենգերովը, Ալեքսանդր Ռոմանովսկին, Ջոն Մալկովիչը, Սերգեյ Խաչատրյանը, Գոթյե Կապյուսոնը եւ այլք:

Ինչպես Armlur.am-ին տեղեկացրին Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբից, այս տարի նույնպես մեր ունկնդիրներին սպասվում են երաժշտական հետաքրքիր հանդիպումներ. Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի հետ ելույթ կունենան թավջութակահարներ Սեւակ Ավանեսյանը, Անաստասիա Կոբեկինան, ջութակահար Կարմինե Լաուրին, դաշնակահար Մասսիմո Սպադան: Փառատոնի համերգները կղեկավարեն դիրիժորներ Սերգեյ Սմբատյանը եւ Ջորջ Փեիլիվանյանը:

Փառատոնի բազմազան երգացանկում Արամ Խաչատրյանի ստեղծագործությունների կողքին կհնչեն նաեւ Սերգեյ Պրոկոֆեւի, Միխայիլ Գլինկայի, Ալեքսանդր Բորոդինի, Նիկոլայ Ռիմսկի-Կորսակովի, Լեոնարդ Բերնսթայնի, Ֆրիդրիխ Գուլդայի, Անտոնին Դվորժակի ստեղծագործությունները:

Խաչատրյանական փառատոնի ընթացքում, ինչպես ամեն տարի, նվագախումբը կներկայացնի «Խաչատրյան ջազ» համերգային ծրագիրը՝ կատարելով Արամ Խաչատրյանի ստեղծագործությունները ջազային գործիքավորմամբ: Որպես մենակատար՝ հանդես կգա դաշնակահար Վահագն Հայրապետյանը:

Խաչատրյանի անվան միջազգային փառատոնը 2021 թվականի նոյեմբերից Եվրոպական փառատոների ասոցիացիայի (The European Festivals Association, EFA) անդամ է:

ԼՈՒՐԵՐ

ՎԵՐԸՆՏՐՎԵՑ ԴԵԿԱՆ

ԵՊՀ արեւելագիտության ֆակուլտետի դեկան Ռուբեն Մելքոնյանը վերընտրվել է այդ պաշտոնում:

«Այսօր արեւելագետների միաձայն քվեարկությամբ վերընտրվեցի ԵՊՀ արեւելագիտության ֆակուլտետի դեկան: Մեծ պատիվ եւ պատասխանատվություն է ղեկավարել ամենակարեւոր եւ ամենահինքնատիպ ֆակուլտետը: Շարունակելու եմ այն նույն ոճով եւ սկզբունքներով, որոնց հավատարիմ եմ եղել նախորդ տարիներին»,-սոցիալական ցանցում տեղեկացրել է նա:

Նշենք, որ Մելքոնյանը ֆակուլտետի դեկանն է 2017 թվականից:

ԲԱՑԱՌԻԿ ՑՈՒՑԱՆԻՇ

Աշխարհի չեմպիոն Մագնուս Կարլսենը բացառիկ ցուցանիշով նվաճեց Champions Chess Tour Finals-ի հաղթողի կոչումը: Նորվեգացի գրոսմայստերը 7-րդ տուրում հաղթեց բոլոր մրցակիցներին:

Կարլսենը պարտության մատնեց ամերիկացի Ուեսլի Սոյին, հնդիկ Արջուն ?րիգաիսիին, ադրբեջանցի Շահրիյար Մամեդյարովին, հոլանդացի Անիշ Գիրիին, վիետնամցի Լեո Կուանգ Լիեմին, հնդիկ Պրագնանադհային, լեհ Յան-Կշիշտով Դուդային:

Մրցանակային հիմնադրամը 210 հազար դոլար էր: Կարլսենը ստացավ 50 հազար դոլար:

7 ԽԱՂԱՑՈՂ ՎԱՏԱՌՈՂՔ Է

Ֆուտբոլի Իսպանիայի հավաքականն աշխարհի առաջնության խմբային փուլի առաջին տուրի հանդիպումից առաջ կարող է կադրային խնդիրներ ունենալ: Լուիս Էնրիկեի գլխավորած թիմի 7 խաղացող վատառողջ է:

Օդափոխման համակարգի պատճառով նրանք մրսածություն ունեն: Հիվանդացածների թվում է նաեւ Մադրիդի «Աթլետիկոյի» հարձակվող Ալվարո Մորատան, որը չի կարողացել ավարտին հասցնել մարզումը: Իսպանիայի հավաքականը նոյեմբերի 23-ին կխաղա Կոստա Ռիկայի թիմի դեմ:

ԳԵՐԱԶԱՆՑ ՄԱՐԶԱՎԻՃԱԿՈՒՄ Է

Իսպանիայի հավաքականի գլխավոր մարզիչ Լուիս Էնրիկեն 52 տարեկանում գերազանց մարզավիճակում է: Նա լուսանկար է հրապարակել մարզումից հետո:

Աշխարհի առաջնությունում առաջին հանդիպումը Իսպանիայի հավաքականը կանցկացնի նոյեմբերի 23-ին՝ մրցելով Կոստա Ռիկայի թիմի հետ:

● *Նոյեմբերի 27-ին Seven Visions Hotels, The Dvin-ում տեղի կունենա՝ «Ջեյկոբ Մեյեր» նորաձեւության ցուցադրություն: Տոմսերի արժեքը՝ 15000-45000 դրամ: Սկիզբը՝ 20:00:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Որքան են կազմում խնամատար ընտանիքին վճարվող դրամական միջոցները:
Հայրիկ Աղաբեկյան (58 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Խնամատար ընտանիքին ամսական ժամանակահատվածով վճարվում են դրամական միջոցներ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով եւ չափով: Խնամատար ընտանիքին վճարվող դրամական միջոցները կազմված են՝

- երեխայի խնամքի եւ դաստիարակության համար նախատեսված միջոցներից.
- երեխայի խնամքի եւ դաստիարակության դիմաց տրվող վարձատրությունից:

Խնամատար ընտանիքին վճարվող դրամական միջոցների ֆինանսավորումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի, ինչպես նաեւ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Խնամատար ընտանիքին վճարվող դրամական միջոցները չեն կարող պակաս լինել մեկ երեխայի համար նախատեսված՝ պետության հոգածության կենտրոններում երեխաների շուրջօրյա խնամքի եւ դաստիարակության համար նախատեսված գումարի չափից:

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ո՞րն է համարվում ազատ ջրօգտագործում:
Միասնիկ Սեպխանյան (36 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ազատ ջրօգտագործում է համարվում այնպիսի ջրօգտագործումը, որը նպատակաուղղված չէ շահույթ ստանալուն.

Ջրի օգտագործումն սպորտային եւ ռեկրեացիոն նպատակներով (ջրային մարզաձեւերով, այդ թվում՝ առանց շարժիչների օգտագործման ջրային սպորտաձեւերով զբաղվելու կամ հանգստի կամ լողալու կամ կարթով ձկնորսության կամ սպորտային որսորդության համար).

Ջրի օգտագործումը հակահրդեհային նպատակներով.

տեղումների օգտագործումն անձանց սեփականություն հանդիսացող հողատարածքներում:

ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Եթե ազատ ջրօգտագործումը խախտում է կամ սպառնում է խախտել ջրերի ստանդարտները, ապա ջրային ռեսուրսների կառավարման եւ պահպանության մարմինը պետք է կանոնակարգի այդ գործողությունը՝ կիրառելով սույն օրենսգրքով սահմանված ջրօգտագործման թույլտվություն տալու ընթացակարգը, ինչպես նաեւ՝ ապահովի ջրային ռեսուրսների պահպանության հիմնական պահանջները:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

Ջոհված կամ անհետ կորած զինծառայողների հարազատները երեկ՝ նոյեմբերի 21-ին, հավաքվել էին Ազատության հրապարկում ու ի լուր աշխարհի՝ հերթական բարձրաձայնումն էին արել իրենց զավակների կամ հարազատների կարգավիճակի մասին: Պետության քայլերը համարժեք չեն ըստ նրանց, այդ իսկ պատճառով իրենք են դռնից դուռ ընկնում, փորձում հարցեր լուծել:

Երեկ նրանք ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինից աջակցություն ակնկալող պաստառներով էին հավաքվել:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **21.11.2022**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: